Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստ., 2011, 175 էջ:*

Հայտնի իրողություն է, որ առավելապես քարոզչությանը միտված ադրբեջանական «պատմագիտությունը» նպատակադրված խեղաթյուրում է Հայաստանի հնագույն ժամանակներից մինչև մեր օրերի պատմությունը: Հատկապես թիրախային է Արցախի պատմության առանցքային դրվագների նենգափոխումը: Նման պայմաններում հայկական պատմագիտության համար առաջնային խնդիր է դարձել համաշխարհային գիտական ու քաղաքական շրջանակներին Արցախյան հիմնահարցի իրական՝ գիտական պատմությունը ներկայացնելը:



Անկողմնակալ հետազոտողի վրա առավել ներգործող է ոչ այնքան պատմաբանի շարադրանքն ընթերցելը, որքան ժամանակի փաստաթղթերին, մամուլի հրապարակումներին ծանոթանալը: Այս տեսակետից խիստ կարևոր է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակված «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը նվիրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման 20-ամյակին: Ժողովածուի կազմող-խմբագիրներն են՝ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյանը և ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը: Այն, փաստորեն, հանդիսանում է 1992 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի խմբագրությամբ հրատարակված «Լեռնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի տրամաբանական շարունակությունը:

Ժողովածուի երկլեզու (հայերեն և ռուսերեն) առաջաբանում Կ. Խաչատրյանն ընթերցողներին ընդհանուր գծերով ծանոթացնում է Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շրջանում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի զարգացումներին՝ ընդհուպ մինչև 1988 թ.: Հեղինակն առանձնապես կանգ է առնում ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4–5-ի հայտնի որոշումների լուսաբանման վրա՝ իրավացիորեն մատնանշելով, որ «ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց … Խորհրդային Հայաստանի շահերը» (էջ 9): Այնուհետև ցույց է տրվում, որ ինչպես Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչությունը, այնպես էլ Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի հայությունը չհաշտվեց հայապատկան երկրամասը Խորհրդային Ադրբեջանին կցելու ապօրինի որոշման հետ և տասնամյակներ շարունակ պայքարեց պատմական արդարության վերականգնման, այն է՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու համար: Այս հանգամանքն առավել քան ակնհայտ է դառնում փաստաթղթերին ծանոթանալու պարագայում:

Ժողովածուում հրատարակված 46 փաստաթղթերը ժամանակագրական տեսակետից վերաբերում են 1923–1988 թթ.:Դրանց հիմնական մասը բնագրի լեզվով է (հայերեն և ռուսերեն):Այդուհանդերձ,առավել կարևոր նկատվածները երկլեզու են ներկայացված: Առաջին փաստաթուղթը Խորհրդային Ադրբեջանի

կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետն է՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ կազմակերպելու մասին, իսկ վերջին վավերագիրը ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի 1988 թ. հուլիսի 12-ի որոշումն է՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս հռչակելու և «Արցախի ինքնավար մարզ» վերանվանելու մասին:

Հրատարակված փաստաթղթերն ու նյութերը պայմանական կերպով կարելի է բաժանել չորս խմբի.

Առաջին խումբ վավերագրերը (-1–3) վերաբերում են 1923–1924 թթ. ԼՂԻՄ կազմակերպմանն ու մարզի կանոնադրության (բնագրում այն նշված է իբրև «սահմանադրություն») հաստատմանը: Կանոնադրությունը գործել է մինչև 1929 թ., երբ ադրբեջանական իշխանությունների կողմից չեղյալ է համարվել:

Երկրորդ խմբի մեջ մտնող միակ փաստաթուղթը (-4) 1945 թ. նոյեմբերին ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի հայտնի նամակն է, ուր առաջարկվում էր ԼՂԻՄ-ը միացնել Հայկական ԽՍՀ-ին:

Երրորդ խումբ փաստաթղթերը (-5–26) վերաբերում են 1960–1980-ական թվականների սկզբին: Դրանք մեծ մասամբ մարզը Խորհրդային Հայաստանին միավորելու հարցով ԽՍՀՄ ղեկավարությանն ուղղված ԼՂԻՄ ազգաբնակչության ներկայացուցիչների, խորհրդահայ մտավորականների, ՀԽՍՀ ղեկավար գործիչների դիմում-խնդրագրերն են: Հատկապես արժեքավոր է 1966 թ. սեպտեմբերի 30-ին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի և հանրապետության մինիստրների խորհրդի նախագահ Բաղալ Մուրադյանի նամակը ԽՄԿԿ Կենտկոմին, ուր պահանջ էր դրվում Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը հանձնել Հայկական ԽՍՀ-ին: Իրենց պահանջը բավարարելու նպատակով նամակի հեղինակներն առանձնահատուկ մատնանշում էին հետևյալ հանգամանքը. «Մեր ժողովրդի համար ազգային մեծագույն ողբերգություն է եղել Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքի ավելի քան 2/3 կազմող արևմտյան մարզերի բռնազավթումը, որն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուղեկցվել է մեկ և կես միլիոն հայերի զանգվածային կոտորածներով: Հենց սրանով պետք է բացատրել հանրապետության բնակչության հիվանդագին արձագանքը թուրքական դիվանագիտության խարդավանքներին, որը փորձում է նենգափոխել պատմությունը և խուսափել Եղեռնի և հայկական հողերի բռնազավթման պատասխանատվությունից: … Եթե Թուրքիայի կողմից բռնազավթված տարածքների մասին ներկայումս հարց բարձրացնելու աննպատակահարմարության փաստարկները ժողովուրդն ընդունում է ըմբռնումով, ապա Ղարաբաղը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու հետ առնչվող հարցերում մենք լուրջ դժվարություններ ենք կրում» (էջ 68–69, փաստ. N 10[1]): Բերված հատվածը, հեղինակների միանգամայն ճիշտ բնորոշմամբ, վկայում է այն մասին, որ «Խորհրդային Հայաստանի իշխանությունները շարունակում էին հանդես գալ նաև Հայկական հարցի պաշտպանության դիրքերից» (էջ 68): Սակայն, ինչպես հայտնի է, այդ խնդրագրերն էական արդյունք չունեցան:

Վերջին՝ չորրորդ խումբ վավերագրերը (-27–46) վերաբերում են Արցախյան հիմնախնդրի նոր փուլին՝ մասնավորապես 1988 թ. փետրվար–հուլիս ամիսների իրադարձություններին: Այդ փաստաթղթերի շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հանրապետության գիտակրթական հաստատությունների (Գիտությունների ակադեմիայի նախագահություն, ԳԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտներ, Երևանի պետական համալսարան, Մատենադարան) աշխատակիցների ժողովներում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ ընդունված որոշումները (էջ 134–150, փաստ. -30–38), որոնք անծանոթ են ուսումնասիրողներին:

Փաստաթղթերի և նյութերի սույն ժողովածուն հասցեագրված է ոչ այնքան հայ, որքան ռուս ընթերցողին, ինչը, անկասկած, նրա կարևոր արժանիքներից է: Ինչպես գրքի առաջաբանում, այնպես էլ փաստաթղթերում

կարմիր թելի նման անցնում է այն գաղափարը, որ Արցախը Հայաստանի անբաժան մասն է և, ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ մեր օրերում Արցախյան գոյապայքարը ողջ հայության պայքարն է՝ երկրամասը Մայր Հայրենիքին վերամիավորելու համար:

Դրվատանքի խոսքերից զատ՝ փաստաթղթերի և նյութերի սույն ժողովածուի վերաբերյալ մի քանի նկատառում ու ցանկություն ունենք: Ցանկալի էր նշել բոլոր փաստաթղթերի նախորդ հրատարակությունների մասին, ինչը վավերագրերի գիտական հրատարակությունների դեպքում կարևոր է համարվում: Որոշ փաստաթղթերի դեպքում (-7, 8) բացակայում է դրանց գտնվելու վայրի մասին տվյալը, ինչը ևս պարտադիր պայման է (եթե նույնիսկ պահվում են կազմողների անձնական արխիվներում):

Ցանկալի էր ժողովածուի վերջում տեղադրել անձնանունների և տեղանունների ցանկ, որն ուսումնասիրողների համար առավել դյուրին կդարձներ փաստաթղթերից օգտվելը, նաև բովանդակության մեջ առկա փաստաթղթերի ընդարձակ վերնագրերը տեղադրել բուն տեքստում: Հույս ունենք, որ ժողովածուի ռուսերեն և անգլերեն վերահրատարակման դեպքում մեր առաջարկները հաշվի կառնվեն:

Արցախյան թեմատիկայով յուրաքանչյուր հաջողված աշխատություն առաջնակարգ զենք է հայ-ադրբեջանական քարոզչական պատերազմում: Համոզված ենք, որ նման հեռանկար է վիճակված նաև «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» փաստաթղթերի և նյութերի ժողովածուին:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ